

27/12/2013
համար 313 Ն

«ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅՂ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ»
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/25-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
15.07.14թ. թիվ 165Ն որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Նպատակ ունենալով ապահովել կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների օգտագործման արդյունավետությունն ու թափանցիկությունը,
հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի 14-րդ մասը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը
(Նախաբանը փոխ. 15.07.14թ. թիվ 165Ն)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել «Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի ուղղությունները և այդ ծախսերի ու կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարների առավելագույն չափերը» կանոնակարգ 10/25-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Արթուր Զավադյան

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի
թիվ 313-Ն որոշմամբ

Արթուր Զավադյան

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար՝

Դավիթ Սարգսյան
«.....» 2013թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/25

**ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԴՐԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ**

**ԳԼՈՒԽ 1. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ**

- Կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվում են այն ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է օրենքով:
- Բացի 1-ին կետով նախատեսված ծախսերից կամավոր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կարող են կատարվել նաև այն ծախսերը և վճարները, որոնք ուղղակիորեն կապված են ֆոնդի կառավարման և պահառության հետ և նախատեսված են տվյալ ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ):

**ԳԼՈՒԽ 2. ԿԱՄԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՀԱՇՎԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ
ՉԱՓԵՐԸ**

- Սույն կանոնակարգի 1-ին գլխում նշված փաստացի ծախսերի տարեկան ընդհանուր մեծությունը չի կարող գերազանցել ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքի 5 տոկոսը: Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆոնդի միջին տարեկան զուտ ակտիվների արժեքը տվյալ տարվա համար ֆոնդի զուտ ակտիվների արժեքների միջին թվաբանական մեծությունն է, որը որոշվում է տարվա ընթացքում հաշվարկված՝ ֆոնդի զուտ ակտիվների արժեքների հանրագումարը բաժանելով տվյալ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման պարբերականության (տարվա ընթացքում ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկների քանակի) վրա: